ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա
Արեւելագիտության ինստիտուտ

Институт востоковедения НАН РА / Institute of Oriental Studies of NAS RA

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ. Գ

Հանրապետական գիտաժողով՝ նվիրված
ճանաչված հայագետ-կովկասագետ
Պավել Չոբանյանի ծննդյան 70-ամյակին
Երեւան, 17-18 մայիսի, 2018

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՒ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

АРМЕНИЯ И ВОСТОЧНОХРИСТИАНСКАЯ ЦИВИЛИЗАЦИЯ – III

Республиканская конференция, посвященная
70-летию со дня рождения известного армениста-кавказоведа
Павла Чобаняна (1948-2017 гг.)
Ереван, 17-18 мая, 2018

ДОКЛАДЫ И ТЕЗИСЫ ДОКЛАДОВ

ARMENIA AND ORIENTAL CHRISTIAN CIVILIZATION – III

National Conference dedicated to the
70th anniversary of eminent armenologist-caucasologist
Pavel Chobanyan (1948-2017)
Yerevan, May 17-18, 2018

PAPERS AND ABSTRACTS

Երեւան Ереван Yerevan – 2018

ՀՏԴ 94(479.25):008:81:27:06
ԳՄԴ 63.3(5Հ)+71+81+86.37
Հ 247

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի եւ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Մեկենասությամբ՝ Պավել Չոբանյանի ընկերների

Խմբագրական հանձնախումբ՝
Ա. Հակոբյան, Ա. Բոզոյան, Ռ. Սաֆրաստյան

Հ 247 «**Հայաստանը եւ արեւելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Գ**»: Հայագետ-կովկասագետ Պավել Չոբանյանի (1948-2017) ծննդյան 70-ամյակին նվիրված Հանրապետական գիտաժողով (մայիսի 17-18, 2018 թ.): Զեկուցումներ եւ զեկուցումների դրույթներ.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018. - 288 էջ:

Ժողովածոն ընդգրկում է 2018 թ. մայիսի 17-18-ին Երեւանում կայացած «Հայաստանը եւ արեւելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Գ» հանրապետական գիտաժողովի նյութերը: Դրանք նվիրված են հայ-կովկասյան պատմա-մշակութային առնչություններին իբրեւ արեւելաքրիստոնեական քաղաքակրթական աշխարհի կարեւորագույն դրսեւորում, հայ եւ արեւելաքրիստոնեական մատենագրությանը, պատմագրությանը, վիմագրությանը, տեղանվանագիտությանը, արվեստին ու ճարտարապետությանը, արեւելյան աղբյուրագիտությանը, Քրիստոնյա Երուսաղեմին, արդի Կովկասին:

Նախատեսվում է հայագետների եւ ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 94(479.25):008:81:27:06
ԳՄԴ 63.3(5Հ)+71+81+86.37

ISBN 978-5-8080-1367-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018
© ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ, 2018

Խորիկյան Հովհաննես
ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ

Սասանյան Իրանի քրիստոնյաները մինչեւ Ե դարը

Ի տարբերություն պետականությունը կորցրած Հայաստանի, Վիրքի, Աղվանքի, որոնք Սասանյան Իրանի տիրապետության ողջ ժամանակաշրջանում պայքարում էին ներքին ինքնավարության եւ անկախության պահպանման համար՝ ասորիները (Sūryāyē) *Սասանյան տերության համակարգում չունեին պետականության վերականգնման խնդիր, եւ նրանց համախմբման գործընթացը լիովին այլ ուղով ընթացավ։ Ասորիների մոտ չկար ընդգծված ազգային ինքնագիտակցություն, եւ նրանց գիտակցությունը ձեւավորվում էր ըստ կրոնի։*

Ասորիներին միավորող եւ մյուս ժողովուրդներից տարանջատող կարեւոր գործոն դարձավ մշակույթը, որն այդ ժամանակաշրջանում գրեթե ամբողջությամբ մտնում էր կրոն հասկացության մեջ։ Մեր թվականության սկզբներին բուռն կերպով զարգացող քրիստոնեությունը շատ արագ տարածվեց Ասորիքում[1]*։ Հենց սկզբից այն քարոզվում էր արամեերենով, ինչն ավելի մատչելի էր հասարակական լայն շրջաններին։ Կրոնական գրականության ստեղծումը հաստատագրում է լեզուն եւ գիրը՝ տալով հեղինակություն եւ կայունություն։ Իրենց հերթին լեզուն եւ գիրը նպաստում են էթնիկ միասնության գիտակցմանը եւ ամրապնդմանը։*

Ասորիները եւ ասորական մշակույթը միջնադարում նշանակալից դեր են կատարել համաշխարհային պատմության մեջ։ Քաղաքական առումով Բյուզանդիայի եւ Իրանի, այսինքն՝ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ բաժանված ասորիները կապող օղակ էին համաշխարհային երկու մշակութային շրջանների միջեւ։

Ասորական գրի եւ լեզվի տարածումը Մերձավոր, Միջին եւ Հեռավոր Արեւելքում պայմանավորված է համաշխարհային առեւտրում ասորիների

---

[1] «Ասորիներ» էթնանվան եւ «Ասորիք» աշխարհագրական հասկացության տարածքային բովանդակության մասին տե՛ս **S. Minov**, Syriac Christian Identity in Late Sasanian Mesopotamia: The Cave of Treasures in Context, Ph. D. dissertation, The Hebrew University of Jerusalem, 2013, p. 345-363. Հանուն գիտական անկողմնակալության նշենք, որ վերջին գրքում ուսումնասիրողը հայկական սկզբնաղբյուրներին պատշաճ նշանակություն չի տալիս եւ հայկական պատմական տարածքները համարում է ասորիների հայրենիք, որը, իբր, քաղաքական պատճառներով էր ժամանակին հայտնվել Մեծ Հայքի տիրապետության տակ։

ունեցած հսկայական դերակատարությամբ, դերակատարություն, որն ավելի ուշ փորձեցին կատարել արաբները։

Քաղաքական առումով ասորիները գտնվում էին չափազանց անբարենպաստ պայմաններում։ Քրիստոնյա Բյուզանդիան ձգտում էր ձեռք բերել ասորիների աջակցությունը, ինչին Իրանը հակադրում էր ասորական քրիստոնեության դավանաբանական հակասությունները Կոստանդնուպոլսի եկեղեցու հետ։ Շահնշահի կառավարության համար նախընտրելի էր, որ Իրանի քրիստոնեական եկեղեցին անկախ լինի բյուզանդականից, իսկ դավանանքն էլ տարբերվի բյուզանդական ուղղափառությունից։

Մեր թվականության առաջին դարերում քրիստոնեությունը, տարածվելով ասորիների շրջանում, որոնք հին ժամանակներից ի վեր ունեին այնպիսի կարեւոր մշակութային կենտրոն, ինչպիսին Անտիոքն էր, ներթափանցում էր կայսրության սահմաններից դեպի Իրան։ Սակայն Իրանում նոր կրոնը սկզբում չի գրավում պետական կառավարման եւ քրմության ուշադրությունը եւ միայն Սասանյանների կրոնական քաղաքականության հետեւանքով է սկսում ենթարկվել դաժան հալածանքների ու ճնշումների։ Վերջին շրջանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առաջին Սասանյանները, որոնք իրականացնում էին նաեւ քրմական գործառույթներ, այլադավաններին բռնությամբ զրադաշտական էին դարձնում եւ արգելում պետության ներսում մյուս կրոնները[1]։

Քրիստոնեական առաջին համայնքներն Իրանում՝ Վերին Միջագետքում, գոյություն ունեին դեռեւս Արշակունիների ժամանակ[2]։ Եդեսիան քրիստոնյաների կարեւոր կենտրոններից մեկն էր։ Քրիստոնյաների տեղաշարժը դեպի Միջագետքի տափաստանները հիմնականում տեղի էր ունենում քրիստոնեական գաղափարախոսությունը քարոզելու, նրա սահմաններն ընդլայնելու նպատակով։ Հետագայում Սասանյան առաջին հզոր արքաների ռազմական հաղթանակները եւ Հռոմեական կայսրության տարածքներից բնակչության վերաբնակեցումը, որոնց մեջ կային մեծաթիվ քրիստոնյաներ, վերջիններիս ստիպում է ինքնակազմակերպվել Պարսից պետության մեջ, որն էլ սկսում է տարբեր ժամանակներում քրիստոնյաների նկատմամբ վարել համապատասխան քաղաքականություն[3]։

---

1 **А. И. Колесников**, Сасанидский Иран: История и культура, С.-Петербург, 2012, с. 446.

2 **J. Wiesehöfer**, Ancient Persia from 550 BC to 650 AD, London – New York, 2001, p. 201; The Church of the East: A Concise History, ed. **W. Baum, D. W. Winkler**, London – New York, 2003, p. 7-8.

3 **M. Brosius**, The Persians, London and New York, 2006, p. 192.

Քրիստոնեության հալածման պատճառներից մեկն այն էր, որ Իրանի կառավարող վերնախավի համար քրիստոնյա բնակչությունն ընկալվում էր որպես Հռոմի համակիր, որտեղ 313 թվականի Միլանի հրովարտակից հետո քրիստոնեությունն այլևս չէր հալածվում: Քրիստոնյա ասորիները քաղաքներում պատկանում էին առևտրա-արհեստավորական դասին, որը հսկայական եկամուտներ էր մուծում պարսկական գանձարան: Շապուհ Բ-ի ժամանակ եւ հատկապես «Մեծ ջարդի» տարիներին (344-379 թթ.)[1], նույնիսկ նրանցից գանձվում էր կրկնակի հարկ: «Արբելայի ժամանակագրության» մեջ լավագույնս է բացատրվում քրիստոնյաների նկատմամբ Շապուհ Բ-ի հալածանքների պատճառը. «Նրանք (մոգերը) արքային հասկացրին, որ բոլոր քրիստոնյաները հոռոմների լրտեսներն են, եւ եթե նրանք իրենց այնտեղի (Արեւմուտքի) եղբայրներին ոչինչ չգրեն, ապա իր տիրապետության մեջ ոչինչ չի պատահի, եւ (բացի այդ) նրանք (քրիստոնյաները) հարուստ են եւ ապահով կյանք ունեն, մինչդեռ արքայից արքան պատերազմների ու ճակատամարտերի պատճառած ծախսերի ծանրությունից կողոպտվել է, իսկ նրանք, պատերազմներից ազատ լինելով, միշտ խաղաղություն են վայելել»[2]: Սա առաջին հերթին նշանակում էր, որ Պարսից արքունիքում քաջ գիտակցում էին, թե տերության գանձարանի համար քրիստոնյաներն ինչքան կարեւոր են:

Շապուհ Բ-ի ժամանակ քրիստոնյաների նկատմամբ կրոնական հարկադրանքը դարձել էր պետական քաղաքականության կարեւոր գործիքներից մեկը, ինչին Իրանի հարուստ քաղաքների ասորի բնակչությունը համառ դիմադրություն էր ցույց տալիս: Հարկ է նաեւ նշել, որ մյուս կողմից էլ զրադաշտական մոլեռանդությունը եւ անհանդուրժողականությունը երբեմն հակադրվում էին պետական քաղաքականության շահերին[3]:

370 թվականից սկսած՝ Արեւելքում հատկապես ասորի քրիստոնյաները շրջադարձ ապրեցին, երբ Արեւելք ժամանած Վաղես կայսրը փորձեց բռնի ուժով ու աքսորներով ասորական եկեղեցին դնել բյուզանդականի

---

1 **J. Walker**, From Nisibis to XI'an: The Church of the East in Late Antique Eurasia, – The Oxford Handbook of Late Antiquity, ed. **Scott F. Johnson**, Oxford University Press, 2012, p. 1001; **R. Payne**, A State of Mixture**:** Christians, Zoroastrians, and Iranian Political Culture in Late Antiquity, University of California Press, 2015, p. 25-26, 38.

2 Ասորական աղբյուրներ, հտ. Ա, Թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագր. **Հ. Գ. Մելքոնյանի**, Եր., 1976, էջ 98; **Հ. Մելքոնյան**, Ադիաբենի պետությունը եւ Հայաստանը, Եր., 1980, էջ 210:

3 **Լ. Տեր-Պետրոսյան**, Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արեւելիցը», Եր., 1976, էջ 8-10:

ազդեցության ներքո։ Կայսրի նման արարքներն ատելություն առաջացրին ասորի եկեղեցականության ու ժողովրդի մոտ։ Պարսիկները հասկացան, որ իրենց համար շահավետ է օգտվել միջեկեղեցական երկպառակություններից եւ հակաբյուզանդական թեւին պաշտպանության տակ վերցնելով՝ խոր անջրպետ ստեղծել, եւ դա հաջողվեց, մանավանդ ե դարից սկսած։ Նեստորականները, վտարվելով Բյուզանդական կայսրությունից, եկան պարսկական տիրապետության մեջ մտնող երկրները, եւ օգտվելով իրենց նկատմամբ պարսիկների ցուցաբերած բարյացակամությունից՝ հակաբյուզանդական գործունեություն ծավալեցին։

431 թ. Եփեսոսում գումարված երրորդ Տիեզերական ժողովում բանադրվեց ե՛ Նեստորը, ե՛ նեստորականությունը եւ ընդունվեց Կյուրեղ Ալեքսանդրացու աստվածաբանական այն բանաձեւը, որը Քրիստոսի մեջ ընդունում էր «Մի բնութիւն, Բանին մարմնացելոյ» սկզբունքը[1]*, այսինքն՝ մարմնացած Բանը՝ «Լոգոսը», անբաժանելիորեն միացած ե՛ւ աստված էր, ե՛ւ մարդ։ Նեստորականներն իրականում նորից վերակենդանացնում էին Քրիստոսի բերած առաջավոր սկզբունքը, եւ ամենից կարեւորն այդ հարցում այն էր, որ ըստ նրանց՝ չարը հավերժական չէր, եւ այն հնարավոր էր վերացնել՝ պայքարելով նրա դեմ, այսինքն՝ ըստ այդ սկզբունքի, տիրող կարգերը, օրենքները հավերժական չեն եւ չեն աստվածացվում։ Սակայն նեստորականների այս առաջադեմ մտքերը եւս մնացին թղթի վրա, որովհետեւ նրանք, հատկապես պարսկական տիրապետության հովանավորությունից օգտվելով, տվյալ պետության սահմաններում իրենց համար կաթողիկոսական աթոռ ստեղծելուց եւ եկեղեցական իշխանություն ունենալուց հետո հեռացան պաշտպանած դիրքերից, եւ ինչպես մեզ հասած փաստաթղթերն են վկայում, համագործակցելով այս անգամ արդեն Պարսից պետության հետ՝ իրենք եւս եղան տիրող կարգերի փառաբանողներ։*

Մինչեւ Դ դ. վերջը – Ե դ. սկիզբը Իրանի քրիստոնեական եկեղեցու եւ պետության միջեւ դեռեւս փակ հարաբերություններ էին[2]*. 410 թվականի ժողովից հետո Սասանյանները ճանաչում են քրիստոնեական եկեղեցին, եւ քրիստոնյաների վիճակն արդեն չի կարելի անորոշ համարել։*

Դ, Ե եւ նույնիսկ Զ դարերում շահնշահերը ժամանակ առ ժամանակ վերսկսում էին քրիստոնյաների հալածանքները, ինչի համար միշտ էլ կա-

---

[1] **Կ. Մելիքյան**, «Narratio de Rebus Armeniae» հայ-քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան Հայոց եկեղեցու պատմության կարեւոր սկզբնաղբյուր, Եր., 2007, էջ 28:

[2] **T. Daryaee**, The Idea of Ērānšahr: Jewish, Christian and Manichaean Views in Late Antiquity, Roma, 2010 (Orientalia Romana, 9), p. 94.

յին հարմար պատրվակներ։ Պատրվակներից մեկը գանձարանը լցնելն էր՝ ի հաշիվ ունեւոր արհեստավորների եւ առեւտրականների՝ բռնագրավելով նաեւ նրանց ունեցվածքը։ Մյուս պատճառն էլ այն էր, որ մոգերը «խանդով» էին վերաբերվում այն իրողությանը, որ նոր կրոնը արագ էր տարածվում՝ գրավելով չափազանց կարեւոր տեղ պետության մեջ եւ շահնշահի արքունիքում։

Այն շահնշահերը, որոնք չափավոր եւ հանդուրժող վերաբերմունք ունեին քրիստոնյաների նկատմամբ, ասորական աղբյուրներում հորջորջվում են «փառապանծ», «հաղթական» (zākyā – Հազկերտ Ա-ի ամենատարածված բնորոշումը[1]), «սիրելի», «խաղաղասեր» եւ այլ տիտղոս-բնորոշումներով։ Իսկ քրիստոնյաներին հալածող թագավորները հիշատակվում են պարզապես «շահնշահ» տիտղոսով կամ էլ առանց տիտղոսի[2]։ Քրիստոնյաների համար վիճելի հարցերում շահնշահի ուղղակի միջնորդությունն անհրաժեշտ էր։ Օր.՝ 497 թ. Զամասպ արքայի հրամանով տեղի է ունենում ամուսնական բարեփոխում, համաձայն որի՝ բոլոր հոգեւորականները՝ անկախ աստիճանից, կարող էին ունենալ միայն մեկ կին, որպեսզի երեխաներ ունենային. այս հրամանն առաջին հերթին ուղղված էր իրանական այն քրիստոնյաների դեմ, որոնք դեռեւս սերտորեն կապված էին մնում զրադաշտական սովորույթներին[3]։

*Առաջին Սասանյանների ռազմական հաջողությունները Կայսրության դեմ ուղեկցվում էին ոչ միայն նոր տարածքներ նվաճելով, այլեւ բնակչության հսկայական խմբեր վերաբնակեցվում էին պարսկական տիրույթներում[4]։ Ասորիները վաղուց բնակվում էին Իրանի տարածքում, հիմա նրանց քանակն ավելանում էր, ինչը ստիպում էր նրանց ինքնակազմակերպման ավելի ճկուն միջոցներ գտնել։ Իրանի քաղաքների քրիստոնյա բնակչությունը (*kristiyān*), համալրվելով մեծաթիվ գերիներով կայսրության նահանգներից, պետության համար դարձել էր անհանգստության առարկա։ Նրանց ինքնուրույն, զրադաշտական քրմությունից անկախ հոգեւորական կազմակերպությունը վերաճել էր մի կազմակերպության, որի*

---

1 **S. McDonough**, A Second Constantine? The Sasanian King Yazdgard in Christian History and Historiography, Journal of Late Antiquity, 1.1 (Spring), The Johns Hopkins University Press, 2008, p. 130.

2 **А. И. Колесников**, Сасанидский Иран: История и культура, с. 442.

3 **J. B. Chabot**, Synodicon Orientale, Paris, 1902, p. 62-68; **А. И. Колесников**, Сасанидский Иран: История и культура, с. 450.

4 **J. Walker**, From Nisibis to XI'an, p. 998.

հետ հաշվի էին նստում պետական շահերից ելնելով, քանի որ այն կատարում էր նաեւ աշխարհիկ գործառույթներ։

Իրանի քաղաքային կյանքում ասորի արհեստավորները եւ առեւտրականները զգալի դեր էին խաղում՝ համախմբվելով միություններ մեջ, որոնք ունեին համքարային կառուցվածք եւ ղեկավարվում էին ավագի կամ էլ արհեստագործական այս կամ այն ճյուղի ղեկավարի կողմից[1]։ Հնում եւ միջնադարում էթնիկական պատկանելությունն ուղղակիորեն կապված էր դավանվող կրոնի հետ. ասորիները քրիստոնյա էին, իսկ պարսիկները՝ զրադաշտական։ Այս հանգամանքը ստիպում է ասորիներին ունենալ իրենց հաստատությունը, որի հովանու տակ նրանք կկարողանային գոյատեւել. նրանք համախմբվում են եկեղեցու շուրջ, իսկ արհեստագործական միությունն ապահովում էր նրան տնտեսական աջակցություն։ Արհեստագործական եւ առեւտրական միությունների ղեկավարները ստորագրում էին եկեղեցական ժողովների ընդունած որոշումների տակ։ Իրանում քրիստոնեության լեզուն ասորերենն էր։ Այդ լեզվով էին կարդում Սուրբ Գիրքը եւ կատարում ժամերգությունը։ Նոր հավատքն ընդունող պարսիկները հարմարվում էին գոյություն ունեցող կրոնական միության մեջ, դառնում նրա անդամները։

[1] **Н. В. Пигулевская**, Культура сирийцев в средние века, Москва, 1979, с. 197.